Այս է տապան Առուսի որդի. Ուս · · · :

*Հրատ. Բարխուդարեանց, 243.*

## 94. ԵՂԱԿԵՐ ԳՅՈՒՂ

***910. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, որը գտնվում է գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու մոտ.*

Այս է տապան Մխիթարի որդի Մեժլում խոխային. թվ. :ՌՃՂԹ: (1750):

*Հրատ. Բարխուդարեանց, 238։*

## 85. ՆԵՐՔԻՆ ՇԵՆ

***911. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** խորանի հյուսիսային կամարի վրա.*

Եկեղեցիս անուանեցաւ Սուրբ Աստուածածին. թվ. :ՌՃԽԶ: (1697):

*Հրատ. Բարխուդարեանց, 245։ Լալայան, V, 330։*

***912. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** մուտքի բարավորի վրա.*

Աստուած ողորմի զօրեցի Գօրգինի որդի Տաւթին որ պատճառ եղև։ Կամաւն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ տէր Եղիային. յիշատակ իւր և ծնողացն, հօրն Աթին և մօրն Հաւումին և կողակցին և որդոցն տէր Գաւթին, Կոստանդին, Եսկարին · · · · տացութեամբ Շիրմազանի որդի Մելքումին · · ։

Ծանոթ. *Թերի* · · · տացութեամբ *բառը ըստ երևույթին* կացութեամբ *է եղել տեղում, որը կարելի է լրացնել* վերակացութեամբ:

*Հրատ. Բարխուդարեանց, 245։*

## 96. ԷՐՔԱՋ ԳՅՈՒՂ

***913. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ** մկրտության ավազանի մոտ ագուցված մի գեղաքանդակ խաչքարի վրա.*

Թվ. :ՉԹ: (1260). Ես Ակոբ կանգնեցի զխաչս Սարգիսա և [կամ] ամեն ծնողաց մերոց. Աստուած ողորմի:

*Հրատ. Բարխուդարեանց, 250։*

***914. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ** մուտքի բարավորի վրա, կիսաեղծ.*

· · · · մէ յիշատակ. թվն. :ՌՃԿԵ: (1716):

*Հրատ. Բարխուդարեանց, 250։ Լալայան, V, 335։*

***915. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատի մոտ, արտաքուստ, տապանաքարի վրա.*

Թվ. :ՌՄԿԶ: (1817), ա· է Պօլնուսու գալն, մայիսի :Ի: (20). Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ:

*Հրատ. Բարխուդարեանց, 250—251։ Լալայան, V, 335։*

## 97. ՈՍԿԱՆԱՊԱՏ ԳՅՈՒՂ

***916. ԽԱՉՔԱՐ,** ագուցված է գյուղամիջի ս. Հակոբ եկեղեցու արևմտյան պատի մեջ, արտաքուստ.*

Սուրբ խաչս ազնական տէր Ովանէսին. թվ. :ՈԴ: (1155):

*Հրատ. Բարխուդարեանց, 273։*

***917. Ս. ՀԱԿՈԲԻ*** *մկրտության ավազանի մոտ, կամար խոյակի վրա.*

Ես Ովանէս, Գրիգոր կամարս յերի Գուդկան, դվիմ իմ մեր (մոր) Ուսուսմի հոգին համար:

*Հրատ. Բարխուդարեանց, 273։*

## 98. ՄԻՐՁԻԿ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

*Գյուղամիջի ս. Գաբրիել եկեղեցուց բացի արձանագրություններ ունի գյուղից հարավ մի լեռնահովտի մեջ գտնվող Քյարխանա վանքը, որ Թաղակապ փոքր եկեղեցի է՝ շինված մի կամարի վրա, սրբատաշ քարերով։ Գյուղի շրջակայքում եղած Ովասափ և Աստվածածին մատուռները հասարակ շենքեր են. վերջինիս մոտ հիշատակված են երեք խաչքար։*

***918. Ս. ԳԱԲՐԻԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ*** *մուտքի ճակատին.*

Արդեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 ամի:

*Հրատ. Բարխուդարեանց, 276։ 276։ Լալաեան, V, 317։*

***919. Ս. ԳԱԲՐԻԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ*** *մուտքի մոտ ագուցված խաչքարի վրա.*

Կանգնեցի Սարուխանս սուրբ խաչս բարեխաւս Ոսկի հոգուն. թվ. :ՌՀԶ: (1627):

*Հրատ. Բարխուդարեանց, 276։*

***920. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ*** *ըեմի ճակատին ագուցված մի խաչքարի վրա.*

թվ. :ՌԿԴ: (1615)

*Հրատ. Բարխուդարեանց, 276։ Լալաեան, V, 345 (Թվականը՝ :ՌԿԵ:)*

***921. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ԳԱՎԹՈՒՄ,*** *տապանաքարի վրա.*

Հանգիստ հողապատեան տեառն Եղիազարու, յաւէտ հանգիստ է նշխար սորին, որ աստ կան. հոգին զոլով միջնորդ առ տէր ժտական վասն իւր որդեկացս, որ եմք տատանման փորձանաց զաղտնի, որ օգտել փութան զմիաբանութիւն հոգևորական, փրկել ի փորձանաց այժմ և յապագայն. հանգեաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնոյ :ՌՃԿԲ: (1713):

*Հրատ. Բարխուդարեանց, 277։*

***922. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ԳԱՎԹՈՒՄ,*** *տապանաքարի վրա.*

Այս է հանգիստ Զաւենու անապատի Մկրտիչ վարդապետին. թվ. :ՌՂԵ: (1646):

*Հրատ. Բարխուդարեանց, 277։*

***923. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ԳԱՎԹՈՒՄ,*** *տապանաքարի վրա.*

Այս է տապան տանս սպասաւոր Մահտեսի վերաձայնի, Նաւասարդ աղա անուանի, եղբայր Թամրազ Քալանթարու Ջակամ մեծ Սահակ ի Ղարամուռաս գեղջէ, կոչի Արամի. մահն դիպէ վաթսուն և :Բ: (2) ամի. :ՌՃՂ: (1741) թուի և ռամդրեա մարմին է :ՂԳ: (93) ամի:

Ծանոթ. *Վերջին նախադասությունն անհասկանալի է։*

*Հրատ. Բարխուդարեանց, 277։*